

դիքների մասին։ Այսպէս, Շլումբերժէկի հրատարակած թիւզանտական կայսրութեան կնիքների մէջ կան Մախիք-ար, այսինքն՝ Միջիք-ար անուն կրող կնիքներ։ Պրօֆ. Աղոնցը հաստատում է, թէ սա այն իշխանն է, որի մասին խօսում է Մատրէսու Ուռհայեցին (Եջ 8) և որը Յալիաննէս Զմշկիկ կայսեր ժամանակակից էր։

Բացի այդ, բնագրում կատարած ո-
րոշ ուղղութեաներով հասկանալի է դար-
ձրենում Յովիհաննես Զմշկիկ կայսեր նա-

մակը հայոց քագաւոր Աշոտ թագրա-
տունու՝ զբանական կամաց առաջա-
տակ է այս պատճենը:

Պրօֆ. Աղոնցի այս 4 աշխատութիւնները արժէքաւոր տուրք են հայ - բիւզանտագիտութեան: Փափաքելի է, որ վաստակաւոր գիտմականը չլինէ եւ հայ մամուլը, ուր նրա գրչի արդիւնքները միշտ ընդունում են չերմ համակրութեամբ:

8. 9.

ՊՐՈՒՅԻ : Մ. ԱԲԵՂԵԱՆ՝ «Հայոց լեզվի տաղաչափութիւն», Երեւան,

1933, էջ՝ 452, զին՝ 10 ս.

Խորիրդային Հայաստանի գրական -
գիտական եւ հրատարակչական կենս-
գում մխիրաբական երեւյր է Մելքո-
նեան փոնդի միջոցներով լոյս սեսնող
հայագիտական աշխատուրիւնների շար-
քը: Պետք է խիստ գոհ լինել այդ -
ինքնին համեստ - ձեռնարկով եւս, որ
ամէն տարի գէք երկու - երեւ արժէ-
քաւոր հատորներ է նվիրում հայ գպ-
րուրեան, քանի որ Երեւանի պետական
հրատարակչական մարմինը իր գոյու-
թեան 14 տարիների ընթացքում այդ
ասպարէզի վրա ոչ իսկ կէսի կէսը կա-
տարել է, մանաւանդ երէ նկատի ու-
նենամք, որ Հայաստանում մի հատկի
հայագիտական պարբերական անգամ
գոյութիւն չունի այսօր: Պատերազմից
առաջ, մասնաւոր անհատների եւ հե-
ղինակների, այլեւ հրատարակչական
մարմինների միջոցներով և գոհարերու-
թեամբ՝ շատ աւելի գործ էր կատար-
ում այդ ուղղուրեամբ: Ապացյա,
քէկուզ, ներկայ գրախօսուրեան առար-
կայ աշխատուրեան հեղինակի գրւածք-
նեոնի շարքը:

Վաստակաւոր ուսուցչապես եւ ծա-
նօթ հայագէտ Մանուկ Արեդեանի գըր-
չին է պատկանում «Հայոց լեզվի տա-

զաշափութիւն» մեծահատոր աշխատու-
թիւնը, թիւ 13րդ՝ Մելքոնեան փոնդի
կրատարակութեանց շարքում։ Աւելի
ասաց եւ նոյն այդ շարքում լոյս է
տեսել հեղինակի մի ուրիշ քազմակը-
մուռ գրածքն եւս՝ «Հայոց լեզւի տե-
սութիւնը»։

ինչպէս վերջինս, այնպէս եւ «Հայոց լեզուի տաղաչափութիւն»—ը հեղինակը աշխատափրած է եղել եւ տպագրութեան համար պատրաստ ունեցել դեռ պատերազմից առաջ, 1912-ին:

Մ.Աբեղեանը իր գրւածքի յառաջապահում ասում է:

«Սեր զքագէտներից եւ սկսնակ բանաստեղծներից, նոյնակու եւ մի բանի երածշտագէտներ զանազան ժամանակներում դիմել են ինձ՝ խնդրելով ցոյց տալ իրենց մի գիրք, որի մէջ բացատրբած լինէին հայոց լեզու տաղաչափութեան սկզբունքները։ Յաւօք չեմ կարողացել բաւարարել թրանց։ Այդպիսի հարցաւքքների համար, կարծում եմ, պիտանի կը լինի այս գիրքը։ Եւ շատ պիտանի, աւելցնեմ մենք։

Ոչ միայն ամէն մի գրագէտ եւ երածիշտ, այլ եւ իւրաքանչիւր հայ ուսուցիչ եւ գրասէր, ամէն մի հրապարակա-

զիր եւ առհասարակ գրչի տէր հայ անհատ, որ կոչում ունի առաջնորդի դեր կատարելու - լինի անմիջապէս քէ միջնորդապէս - հայերէն լեզվի ուսուցման ասպարէգում, տարրական պարտականութիւն պիտի համարի, շարունակ խորանարդ իր հայերէնագիտութեան մէջ, հարստացնելու իր լեզվական գիտելիքները: «Հայոց լեզվի տաղաչափութիւն», «Հայոց լեզվի տաղաչափութիւն» եւ նման գրւածքները լաւագոյն ուղեցոյցի դերը կատարել կարող են բոլոր հարցասէրների եւ գրասէրների համար:

Ամէն մի լեզվի տաղաչափութիւն՝ նոյն այդ լեզվի ամբաժան մասնիկն է, որով եւ «տաղաչափութիւնը լեզվական ուսումնագիրութիւն է, լեզվի ընդհանուր հնչարանական (ֆոնտիկ) ուսումնափուրեան մի մասը» (էջ 8): Այս հիմնական խնդրի ուսումնագիրութեան է նկրած եւ ամբողջ գրւածքը, որչափ որ հարցը հայոց լեզվին է վերաբերում:

Այսուել հեղինակը ընականարար նկատի ունի մեր արդի ամբողջական լեզուն, բավանդակ աշխարհարարը: Մոռացուրեան չէ տրամադրեան ուսումնական գրաբառը, որչափ որ մեր հին մատենագրութիւնը նիւր է մատակարարում տրամադրեան ուսումնագրութեան համար:

Իր տեսական հետազոտութիւնները եւ նգրակացուրթիւնները հեղինակը հիմնում է բազմարի նմոյշների վրա, քաղածարեւելահայ եւ արեւմտահայ բանաստեղծներից, այլ եւ մեր հին մատենագրներից: Պատկանեան, Յ.Թումանեան, Յ.Յովիսիսիսիսեան, Ա.Խահակեան, Վ.Տերեան մի կողմից. Ալիշան, Մ.Պէշիկ-թաշեան, Պ.Դուրեան, Թ.Թերզեանը եւ ուրիշներ՝ երկրորդ կողմից. Շնորհալին եւ Նարեկացին, հներից, այլ եւ ումանի մեր միջնադարեան բանաստեղծներից - դրանք բոլորը - ընտիր ուսանութեան նմոյշներով ներկայացւած են հատորի զանազան էջերում, խնդրի այս կամ այն կէտք հիմնաւորելու միցին:

Քանի որ, ինչպէս ասւեցաւ վերը, գրւածքը տպագրութեան համար պատրաստ է եղել արդէն 1912-ին, յետպատերազմնան եւ նորագոյն բանաստեղծները նկատի են առնել աշխատութեան վերամշակման ընթացքում միայն, յաւելումների եւ ամբողջացումների մէջ (էջ 192 եւ շար.): Այդ մասերում նըկատի են առնել խորհրդահայ բանաստեղծներից՝ Զարենցը, Ա.Վշտումին եւ Գ.Արսլը:

Ցիշեալ եւ ուրիշ հեղինակների ուսանութեան օրինակներով՝ հեղինակը մի առ մի, ամենայն մանրամասնութեամբ պարզում է հայ բանաստեղծութեան մէջ կիրառող տաղաչափական կանոնները եւ սկզբունքները: Քանի որ վերջիններս մի կարեւոր չափով հասարակաց են առհասարակ բոլոր գրական լեզուներին, ուստի եւ հեղինակը իր տեսութիւնները հիմնառողելու համար նկատի է առնում նաև ուսուց, քրանսացոց, գերմանացոց, այլ եւ հին յոյնների բանաստեղծական գրւածքները, դրանցից եւս նմոյշներ բերելով: Այդ ամէնի մէջ հեղինակը, բնուութեան ենթարկելով մեր բանաստեղծների տաղաչափական արւեստը, օրինակներով ցոյց է տալիս նըրանց կիրառած չափերի ուղիղ եւ սխալ կողմերը, առաւելութիւններն ու թերութիւնները: Զմոնեամ ասել, որ Հայկական կոչւած տաղաչափութիւնը եւս, որ յատուկ է մեր շարականներին եւ որ ժամանակին հմտօրէն ուսումնագիրել եւ անձամբ էլ կիրառել է Հ. Արսէն Բագրատումին, մոռացուրեան չէ տըրած:

Այս կարճ տողերի մէջ ամելարելի է, ի հարկէ, հանգամանօրէն կանգ առնել գրւածքի բոլոր հատածների եւ ստորաբաժնումների վրա: Գոհանակ զլյանութեան միայն յիշատակելով:

Առաջին հատածը ընդհանուր բնոյրութիւնի, խորագրաւծ է՝ Ուժ եւ ոստանաւոր, եւ իր հերքին ստորաբաժնաւած է զանազան գլուխների յօդածների.

Ռիբ-մ, Շեշտ եւ Ամանակ, Սղում եւ Երկարում, Ռտքերի տեսակները, Շեշտական ոտանաւորներ եւ այլն: Մրանցից ամէն մէկն էլ իր ստորաբաժանումը ունի:

Երկրորդ հատւածը կրում է Հայերէն ոտանաւորների տեսակները վերապիրը - եամբական ոտանաւոր, անապեսու, եամբ - անապեսու, համաշեշտ ոտանաւորներ, աշուղական չափեր, ազատ ոտանաւորներ եւ այլն, ամէն մէկը՝ իր ստորաբաժանումներով:

Երրորդ հատւածն է՝ Հանգիտութիւն, յանդ եւ տուն: Հանգիտութիւն բառով՝ հեղինակը տալիս է alliteration-ի գաղափարը, մինչդեռ հանգիտութիւն ասելով սովորաբար հասկանում ենք անալոգիան. alliteration-ը աւելի յարմար է նմանահնչութիւն, նմանաձայնութիւն եւ կամ նմանայանք բարգմանը՝ նայած տեղին:


Իր գրքի վերջին հատւածում ուսումնասիրողը պարզում է «Հանգիտու-

թեան» էութիւնը, յետոյ առանձին - առանձին բնուում է բաղադայների եւ մայնաւորների ոիք-մական հանգիտութիւնը: Վերջում հետագոտում է յանգի ծագման եւ զարգացման, նրա տեսակներին եւ հնչիւններին վերաբերեալ խնդիրները, եւ այլն:

Կարծում ենք այսչափով գէք մօտաւոր գաղափար տվինք «Հայոց լեզուի տաղաշափութիւն» գրւածքի մասին, մեծարծեք մի գործ՝ արժանի՝ ամենայն շնորհակալութեան: Ցանկալի է որ մեր գրագէտները լայնօրէն օգտվին նրանից: Բաղալի է նաև, որ հեղինակի պատրաստի միւս աշխատութիւններն եւս, դրանց քրում եւ հայ - ժողովրդական դիւցագներգութեան (Սասմայ Ծոեր) ամբողջական (մի քանի տասնեակ փոփոխակներով) խմբագրութիւնը, լոյս աշխարհ տեսնելու համար այլեւս երկար ժամանակ հերթի չսպասեն:

Բերլին

Ա. Ա.



ԸՆԹԵՐՑՈՂԻ ԷԶ

«Վէմ»-ի գրեթէ իւրաքանչիւր համարի առթիւ խմբագրութեանը կամ աշխատակիցները նամակներ են ստանում ընթերցողներից, որոնք կարծիք են ընթերցողներից, յայտնում իրենց հետաքրքրուղ նիւթերի յայտնում: Հետո կամ կամ կամ մասին: «ԸՆԹԵՐՑՈՂՈՂԻ էջ» բաժինը բաց ենք անում, որպէսզի այդ նամակներից

ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող մասերը քաղւածաբար ներկայացնենք հանրութեան: Կարճ եւ ամփոփ գրութիւններով ընթերցողները հնարաւորութիւն կոնենան արտայայուել այս բաժնում:

ԽՄԲ.

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԸ

Մեր աշխատակից Յ. Զաւարեանը իր «Սայեաթ Նովա» աշխատութեան վերջին մասի առթիւ վիճնական գիտնական Հ. Ն. Ակինեանից ստացել է մի նամակ, որից քաղում ենք հետեւեալ մասը:

ԽՄԲ.

Յարգելի բարեկամ,

Կարդացի «Վէմ»-ի վերջին քրիմ մէջ Զեր խիստ հետաքրքրական յօդածը Սայեաթ Նովայի վերջին օրերու եւ մահան մասին: